ԳԼՈՒԽ 2

ԱՄԲՈՂՋ ՅՈՒՅԻՉՈՎ ԱՍՏԻՃԱՆ ՄԻԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԲԱԶՄԱՆԴԱՄՆԵՐ ՌԱՑԻՈՆԱԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 5. ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՐԱՆՑ ՀԵՏ

4. Նույնական ձևափոխություններ: Նույնություններ

Արտահայտությունների նույնական ձևափոխությունները մաթեմատիկայում կարևոր տեղ են զբաղեցնում: Հավասարումներ և անհավասարումներ լուծելիս, ֆունկցիաներ հետազոտելիս, հանրահաշվի և երկրաչափության շատ բանաձևեր արտածելիս և բազմաթիվ այլ հարցերում հարկ է լինում կատարել այս կամ այն նույնական ձևափոխություն:

Քանի որ նույնական ձևափոխությունները սերտ կապ ունեն «թույլատրելի արժեքների բազմության» հասկացության հետ, ուստի անհրաժեշտություն է առաջանում տալ այդ հասկացության ընդհանուր սահմանումը (հանրահաշվական կոտորակների համար նման սահմանում տրվել է):